Հ Ր Ա Մ Ա Ն

31 մարտի 2022թ. Թիվ 145-L
ք. Երևան

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ ԿԱՆԽԻԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԵՏԵՐՈՒՄ ԱՄՆ ԴՈԼԱՐ ԱՐԺՈՒՅԹՈՎ ԳՈՒՄԱՐԻ ԿԱՆԽԻԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) կանոնադրությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Ս.թ. ապրիլի 1-ից Բանկի Վճարային քարտերի տրամադրման և սպասարկման սակագների 1.27-րդ և 1.28-րդ կետերով սահմանել հետևյալ սակագները.

- Այլ բանկերի Visa, Mastercard, American Express, ՄԻՐ և JCB քարտերով Բանկի կանխիկի տրամադրման կետերում ԱՄՆ դոլար արժույթով կանխիկ գումարի տրամադրում՝ 3%,

- Բանկի կողմից թողարկված քարտերով Բանկի կանխիկի տրամադրման կետերում և Քարտային հաշիվներից ԱՄՆ դոլար արժույթով կանխիկ գումարի տրամադրում՝ 2%-ի և տվյալ քարտատեսակի համար Բանկի բանկոմատներում և կանխիկի տրամադրման կետերում սահմանված կանխիկացման սակագինի տարբերության չափով:

- Այն դեպքում, երբ ֆիզիկական անձի անունով բացված անվճար կանխիկացման հնարավորություն տվող քարտի քարտային հաշվին արտարժույթի փոխանցման համար արդեն գանձվել է Բանկի Հաշվարկադրամարկղային գործառնությունների սակագնի 28.1. և 28.2. կետերով սահմանված միջնորդավճարներից որևէ մեկը, ապա Բանկի կանխիկի տրամադրման կետերում և Քարտային հաշիվներից կանխիկ գումարի տրամադրում՝

  - ԱՄՆ դոլար արժույթով – 1.5%
  - Եվրո արժույթով – 0.5%

2. Սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած համարել ս.թ. մարտի 4-ին ԳԳՏ կողմից տրված թիվ 106-L հրամանը:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Գլխավոր գործադիր տնօրեն՝ Hakob Andreasyan Digitally signed by Hakob Andreasyan Date: 2022.03.31 17:10:54 +04'00' **Հակոբ Անդրեասյան**